

ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐ

ԵՐԳԱՆԱՌՆ ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՎ

Գրեց՝

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ - ՄՈՎՍԵՍԵԱՆ

★

ԾԱՆՈԹ. ԽՄԲ. — Լուսահոգի Հ. Սահակ Վրդ. Տեր Մովսեսեանի ձեռագիր տետրակներում վրայէն քաղած կը հրատարակեմք այս ողբերգութիւնը, որ ունի իսկապէս հայրենասիրական անկեղծ շունչ եւ ոգի, ի յիշատակ մեծամեծ պատմագրին:

★

Ա. Զ. Դ.

Որչափ ես գիտեմ, Արշակ Բ-ի վրայ վեց ողբերգութիւն գրուած է յաջորդաբար: Հեղինակները բոլորն ալ կը պատկանին Վենետիկի Միսթարեան դպրոցին:

Այդ ողբերգութեանց անդրանիկն է Սեպուհ Միմասեանինը, գրուած 1857ին: Յետոյ Մկրտիչ Պէշկեքաշեանինը, 1860ին:

Ճիշտ նոյն թուականին գրած է Հ. Պետրոս Միմասեան նոյնանուն ողբերգութիւն մը, որ Փաւստոս Բիւզանդէն ներշնչուած՝ Դրաստամատի սիրալի գրուածով կը դանդաղանուի նախորդ ևրկուքէն: Այս գործը անտիպ է:

Չորրորդ ողբերգութիւնն է Խորէն Վրդ. Գալֆայեանինը, որ յետոյ կոչուեցաւ Նարայէյ, եւ ապա Լուսինեան: Լոյս տեսած է 1861ին, ոտանաւոր տաղաչափեալ, կէս դրարար եւ կէս աշխարհարար:

Հինգերորդն է Էմմանուէլ Եսայեանի ողբերգութիւնը, տպագրուած 1870ին, յօրինուած աւելի դրարար լեզուով՝ քան աշխարհարարով:

Վեցերորդն է Թովմաս Թերգեանինը, որ երգախառն քերթուած մըն է, տպագրւ-

ուած 1871ին, գրուած նախ խաղերէն լեզուով, ապա հայերէնի թարգմանուած տաղաչափեալ, նոյնինքն հեղինակէն:

Այս բոլոր հեղինակները, բացի Մ. Պէշկեքաշեանէն, ներշնչուած են Փաւստոս Բիւզանդի պատմութեանէն, որ Հայոց քաջարի թագաւորին դէմքը այնքան յուզիչ դարձուցած է՝ հայկական հողի եւ Դրաստամատի սրտաշարժ գրուածներով: Այս հեղինակներուն քով, թէեւ չի պակսիր թէ՛ թատերական եւ թէ՛ քերթողական ճաշակը, — քանի որ անոնք ապրած էին իտալական պայծառ երկնքի տակ —, սակայն ամէնուն քով ալ կը նշմարուի պատմական դէպքերու խիստ վերիվերանց ուշադրութիւն, եւ առանց քննութեան՝ ներմուծումներ:

Այո՛, թէեւ ամէնքն ալ իրենց նախարան գեղոյցներուն մէջ կը խոստանան պատմութեան եւ աւանդութեան հաւատարիմ արձագանգն ըլլալ, սակայն իրականին մէջ, անոնցմէ կը դարձուցին եւ անհաւատալի տեսարաններ կը պարզեն: Այսպէս Խորէն Վրդ. Գալֆայեան, իր ներածութեան մէջ կ'ըսէ՝ թէ պատմական մասին մէջ առաջնորդ ընտրած է Փ. Բիւզանդի պատմութիւնը: Եւ կը յարէ՝ թէ «պատմական ճշմարտութիւնը ըստ կարելոյն պահելը՝ ողբերգութիւն պարտքն է»: Յետոյ կ'աւելցնէ. «ըստ կարելոյն՝ ասեմք, որովհետեւ ազատ է քերթողը պատմութեան պարզանքները երբեմն թեթեւ մի փոփոխել, բաւական է որ ճշմարտամաս լինին իւր մուծեալ փոփոխութիւնները, ու ծառայեն ողբերգութիւններն աւելի սրտաշարժ կամ ահաւոր ընծայելու»:

Դժբախտաբար հեղինակը իր դրած սկզբունքին չէ հետեւած. նախ Բիւզանդի այն գեղեցիկ աւանդութիւնը, այն է հայրենի հողին եւ ջուրին ազգեցութեան դրուագը՝ բնաւ նկատի առած չէ, որ բանաստեղծական տեսակէտով ալ այնքան սրտաշարժ է: Երկրորդ, պատմութեան պարզանքները ոչ թէ թեթեւ մը, այլ արմատապէս փոխած է. օրինակի համար, երբ չորս հայ նախարարներ Հայաստանէն կը

բերէ ու կը մտցնէ Անյուշ բերդը. ասիկա պատմութեան ողբոյն եւ տարրական ողբ-մտութեան հակառակ է: Վասնզի ոչ մէկ մարդ այդ ահաւոր զնտանին չըջակայքը չէր կրնար մօտենալ — ո՛ւր մնաց Արշակի հետ սիրով կապուած հայ նախարարները: Նմանապէս պատմութեան ողբոյն հակառակ կը գործէ, երբ նոյն Խորէն Վրդ. Գալֆայեան, Անյուշ բերդին ծերունի իշխանը եւ անոր որդին՝ Արշակի հետ մերտնդութեան մէջ կը դնէ, որոնք՝ ըստ քերթողին՝ խիստ հսկողութեան տակ կը գտնուէին պարսիկ մեծ իշխանի մը, որեւրիմ թշնամի Արշակ Բ-ի: Ասկէ դատ, արտառոց սխալ մըն ալ կը գործէ՝ Անյուշ բերդի սենեակին մէջ, Արշակի դիմաց դրնելով Փառանձեմի յարգալից մորթը, փոխանակ Վասակ Մամիկոնեանի պաճուճապատանքին, որ պատմականն է:

Անդին Միմասեանը աւելի հետեւող մըն է եղած Խորենացիին, որ պատմական իրողութեան չի համապատասխաներ. մանաւանդ որ Մեծն Ներսէսի ուրուականը կը մտցնէ Անյուշ բերդին մէջ: Մ. Պէշկեքաշեան գեռ աւելի անհեղեղ կէտեր ունի, որովհետեւ Մեծն Ներսէսը անձնապէս ալ կը ներմուծէ Անյուշ բերդին մէջ, իսկ Էմմանուէլ Եսայեան, պատմական ճշմարտութեան դէմ կը մեղանչէ՝ իր ողբերգութեան մեծ մասին դիւցազնուհին գնելով Շապուհի աղջիկը, որ իբր թէ Արշակի նշանածն ըլլայ եւ այն աստիճանի սիրահար Հայոց դժբախտ թագաւորին, որ Դրաստամատի հետ կտրելով Խուժաստանի անձայր անապատները, կը հասնի Անյուշ բերդը, երկար խօսակցութիւն կ'ունենայ Արշակի հետ, եւ հուսկ՝ անոր սիրով խելացնոր, սուրով անձնասպան կ'ըլլայ:

Գալով լեզուին, այս ողբերգակները ընդհանրապէս զրաբարախառն դրոշմ ունին, որովհետեւ հեղինակները իրենց ուսուցիչներուն նման համոզուած էին թէ ազգային ողբերգութիւն մը արժանի էր որ գրուէր մեր նախնեաց վսեմ ու գեղեցիկ լեզուով, զրաբարով, որ ինքնին գեղեց-

կութիւն եւ վսեմութիւն կու տայ ազգային հին պատմութեան եղբրական մէկ զրուագին:

Պէտք է նկատել որ այդ շրջանի հայերէն գրական լեզուն՝ Ս. Ղազարու վանքին տիրապետութեան տակ գտնուելով՝ աշխարհաբարը դեռ յարգ չունէր, եւ մանաւանդ թէ հոսանք մը կար հետզհետէ դայն զրաբարին մօտեցնելու:

Սեպուհ Միմասեանի եւ Թովմաս Թերգեանի ողբերգութիւնները միայն բաւական կոկիկ աշխարհաբարով գրուած են:

Դասականութեան շունչն ալ միւս կողմէ կը մղէր տաղաչափեալ շարադրութեան, քանի որ դիւցազններու բերանը դրած խօսքերը՝ միշտ աւելի բարձր ոճ եւ լեզու պէտք է ունենային, առանց հեռանալու բնականութենէն:

Ի՞նչ է եղած իմ ուղղութիւնը:

Ես համոզուած եմ որ ներդաշնակ եւ մաքուր աշխարհաբար՝ ազգային պատմական ողբերգութիւններու շատ յարմար է. ատով՝ մեր Ժողովուրդը լաւագոյնս կը սորվի մեր ազգային պատմութեան գեղեցիկ զրուագները, կը բոցավառի նոյնիսկ անոր սիրտը մեր հին յիշատակներու հետ՝ նաեւ հայրենասիրութեամբ: Մաքուր, ճշկուն եւ դիւրաթեք լեզուն՝ միանալով թատերական եւ քերթողական նուրբ ճաշակին, մեծ տպաւորութիւն կ'ընայ թողուլ այն անուս զանգուածին վրայ՝ որ աւելի կարօտ է հայրենիքին վրայ բան մը լսելու եւ հայրենիքի վսեմ սիրովը վառելու:

Մասնաւոր ջանք մը թափած չեմ որ ներկայ ողբերգութեան ոճը ծաղկեալ եւ զարդարուն ըլլայ: Ես ջանացած եմ գոնէ լաւ թափանցել այն ժամանակի պատմութեան ոգիին մէջ:

Հարկ կը համարիմ շեշտել կարեւոր պարագայ մը: Ներկայ ողբերգութեան մէջ, պատմական մասին առաջնորդ առած եմ Փաւստոս Բիւզանդի աւանդածները, որոնց կը համաձայնին ժամանակակից Մարկեղիոս եւ Պրոկոպիոս հոռոմայեցի պատմադիրները: Համոզուած եմ որ ող-

բերդակի մը պարտքն է ամէնէն առաջ՝ պահել պատմական ճշմարտութիւնը: Ասով հանդերձ բանաստեղծական աւելնը ազատ է պատմութեան զրուագները գրաւիչ չըջանակի մը մէջ ղեւեղելու, մութ եւ թերի կէտերը լրացնելու, միշտ պատմական հիմերու վրայէն քաշելով:

Իմ առաջին եւ գլխաւոր դիտարկումներն է եղած որ Արշակ Բ. Հայոց այս քաջարի թագաւորը, բոլորովին հայկական մտքի մը ծնունդն է լլայ, թէ՛ նիւթով եւ թէ՛ ոգիով:

Եթէ մեր կարողութիւններուն միայն նայելու ըլլայինք՝ հարկ էր հրաժարիլ այս ծանր ու բարդ ձեռնարկէն, սակայն ազգային ողբերգութենէ մը առաջ եկած մեծամեծ օգուտներուն յոյսը՝ մեզ քաջալերեց ամէն դժուարութեանց յաղթելու: Եթէ յաջողած ենք մեր նպատակին մէջ, մեր հայրենասիրական դիտարկութիւնը լիովին պսակուած կ'ըլլայ: Իսկ թերութեանց համար ընթերցողներուս ներողամտութիւնը կը խնդրեմ:



Ա Ն Ձ Ե Ր

- ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ - Թագաւոր Հայոց
- ՓԱՌՆՁԵՄ ՍԻՆԻ - Թագուհի Հայոց
- ՆԵՐՍԵՍ ՄԵՍ - Կաթողիկոս Հայոց
- ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ - Սպարապետ Հայոց
- ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ - Որդի Վասակի
- ՊԱՊ - Գահաժառանգ Հայաստանի
- ՍՊԱՆԴԱՐԱՏ ԿԱՄԱՐԱԿԱՆ - 13 տարեկան իշխանիկ
- ԱՐՏԱԽԱՋԻ ԲԴԵՇԵ - Գլուխ պարսկասէր նախարարներու
- ՋԱԻՆ ԲԴԵՇԵ ԾՈՓԱՅ - Պարսկասէր նախարար
- ԵՐՈՒԹԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ - Ուրացող նախարար
- ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ - Հետեւորդ Մերութանի
- ՇԱՊՈՒՆ - Պարսից թագաւոր
- ՋՐՈՒԱՆ - Պարսիկ աստղագէտ
- ՋՐԱԴԱՇՏ - Մոզպէտ
- ԱԼԱՆԱՍՐԱՆ ՊԱՀԼԱՆ - Շապուհի զեռպան
- ՎԱՀԱԳՆ - Վհուկ Հայաստանի

- ԱՆՈՒՇԱԽԱՆ - Վհուկ Հայաստանի
- ՏՈՐԲ - Վհուկ Հայաստանի
- ՍԻՍԱԿ - Լրտես Մերութանի
- ՀՐԱՋԵԱՅ ԵՒ ՊԵՐՃ - Արշակի արքունիքին պահակներ
- ՍՈՒՐԷՆ ԵՒ ԿԱՐԷՆ - Շապուհի արքունիքին պահակներ
- ԱՐՏԱԽԱՆ ՊԱՀԼԱՆ - Բերդապահ Անյուշ բերդի
- ՎՈՆՈՆ ՊԱՀԼԱՆ - Բանտապան Անյուշ բերդի
- ԴՐԱՍՏԱՄԱՏ - Ներքինապետ Արշակ թագաւորի
- ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՆԵՐ (4)
- ՀՈՎԻԻՆԵՐ
- ՈՒՐՈՒԱԿԱՆԵՐ (2)
- ՋԱՅՆԵՐ ԲԵՄԻ ԵՏԵԻՆ
- ԱՆԱՀԻՏ ԵՒ ԱՍՏԳԻԿ (անխօս) - Փառանձեմի նախնիներ
- ԹԻԿՆԱՊԱՀ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ



ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Տեսարանը կը ներկայացնէ Հայաստանի Բագրեւանդ գաւառի Բագուան աւանի մօտ դաշտ մը, որ կը տարածուի մինչեւ եղջերք կոչուած լեռները: Հեռուէն կը տեսնուին Զարեհաւան փառքի աւերակները: Կը նշմարուի խոր ֆարանգ մը, ուրկէ կ'ելլէ գոլորշի. ֆարանգաւը բնականին է հայ բախտագուշակներու: Տեսարանը գիշերային է եւ փոքորկալից: Վարագոյրը բացուելուն՝ վիռկները ֆարանգաւէն դուրս կ'ելլեն. ձեռքերուն մէջ ունին բուսեղէն, գոյգգոյն գգեստներ հագած, գլուխին սպիտակ վարջամակ փաքած, իսկ իրենց վիզերուն եւ ձեռքերուն անցուցած են օձի շապիկներ:

ՏԵՍԻԼ Ա.

ՎԱՀԱԳՆ - (փոքորիկ եւ կայծակ) : Ահա նախանշանները Հայաստանի գլխուն զաւիք չարիքներուն: Պատերազմներ եւ աւերումներ, որոնք ժողովուրդին արիւնը կը քամեն:

ԱՆՈՒՇԱԽԱՆ. - Այո՛, Վահագն, չորս

տարի մեր հայրենի հողը ծածկուեցաւ քաջերու արիւնով:

ՏՈՐԲ. - Անուշաւան, դիտե՛ք թէ ով է այս չարիքներու սկզբնապատճառը:

ԱՆՈՒՇ. - Տո՛րբ, դու մեր մէջ ամէնէն տարեցն ես, դու լաւ պիտի դիտնաս որ չարիքին արմատը Շապուհն է, Պարսկաստանի մեծագոր եւ հպարտ արքան, որ չի դադրիր հրով եւ սրով դատելէ մեր բնաշխարհը:

ՏՈՐԲ. - (աշխուժով) Ո՛հ այդպէս. հայ նախարարներու ձեռքովն է որ այդ հուրն ու սուրը մտեր է մեր աշխարհին մէջ:

ՎԱՀ. - Տորբ իրաւունք ունի: Օտար թշնամին Երբեք պիտի չհամարձակէր մեր հայրենի հողին վրայ ոտք դնել՝ եթէ թեւ ու թիկունք չունենար ներքին թշնամին:

ՏՈՐԲ. - Մեղմէ ո՞վ չի յիշեր այն սարսափելի օրերը, երբ յանկարծ Մասանեան գունդերը փրկելով Հեր Եւ Զարեհանդ ողողելով՝ կ'ուղէին աւերն ու արտասուքը մտցնել մեր Երկիրը. խորով թագաւորը Դատարէնի՝ Բիւնուեանց նահապետին հրամայեց որ արշաւանքին առջեւ առնէ: Բայց Դատարէն մատնիչ ելաւ, Զարեհ տուաւ հայ բանակը, ուսկից միայն դուժկաններ ազատեցան:

ԱՆՈՒՇ. - (կատաղութեամբ բռնկեց ղեկի երկինք բարձրացնելով) Ա՛խ, Հայաստան, ինչպիսի՞ անարժան դաւակներ ծներ ես:

ՏՈՐԲ. - Մատնիչ եւ դաւաճան հայ նախարարներու շարքը փակուած չէ: Այսօրուան պէս կը յիշեմ. տարիներ առաջ տիրադէմ մարդ մը, ամէն առաւօտ, ոսկեղէն դաւազանի մը վրայ կոթնած, կը շրջէր Արտաշատի արքունիքին ծաղկազարդ պարտէզներուն մէջ. կոյր ծերունին մերթ կը նստէր ոսկեղէն աթոռի մը վրայ, մերթ ոտքի կանգնելով խորունկ հռաւանքներ կ'արձակէր, կը ծեծէր կուրծքը, ապա ձեռքերը երկինք բարձրացնելով ողորմուկ ձայնով կ'աղաղակէր. « Գիտեմ որ իմ մեղքերուս չարութեան համար ինձ մէջ վրէժ լուծուեցաւ, վասնզի նախ ես խաւարեցուցի այն աշխարհը, որուն վրայ

կը թագաւորէի, զրկելով դայն իր լուսաւոր վարդապետէն: Ես էի որ հրամայեցի բռնած ընել եւ սպաննել Յուլիկ հայրապետը: Ահա անոր փոխան՝ խաւարեցաւ իմ ալ աչքերուս լոյսը »: Փխակ Սիւնին մատնեց հայոց թագաւորը:

ՎԱՀ. - Փխակ Սիւնին՝ պարսիկ թագաւորին աչքը մտնելու եւ փառքի հասնելու համար՝ դնաց Ատրպատական, ուր կը նստէր Վարադ-Շապուհ մարդպանը, եւ անոր մատնեց հայոց թագաւորին խորհուրդը՝ թէ յոյսը կայսեր վրայ դրած է եւ կը խորհի Մասանեան ցեղը ջնջել: Վարադ-Շապուհ բարեկամօրէն կը մտնէ Հայաստան, կը հրաւիրէ Հայոց թագաւորը եւ անոր ի պատիւ մեծ ճաշկերոյթ մը կուտայ, կը զինովցնէ դայն եւ այսպէս կը ձերբակալէ եւ Շապուհ թագաւորին հրամանով՝ անոր աչքերը փորել կուտայ:

ԱՆՈՒՇ. - Ո՛հ անգութ պարսիկ, ես կը սոսկամ այս տեւ պատկերներէն...

Երգ (յանկարծ բեմի ետեւէն կը լսուին հայ երգիչներու երգը սրինգի մը ընկերակցութեամբ. վիռկները կը մօտեցան լաւ լսելու համար):

ԵՐԳ

« Մեր Հայրենեաց վեհ ոգիներ
Օն, իջէք հայ դաշտերու վրայ
Ծագէ՛ Հայոց պայծառ արեւ
Թունդ հանէ մեր նկուն սրտեր:

Պերճ առաւօտ Նաւասարդի,
Ուրախութիւն հայ մըշակին,
Ծածկէ պճնէ հողն հայրենի
Սիրուն նախուն կապերտներով »:

ՏՈՐԲ. - Որչափ երջանիկ են այս հովիւները որոնց բնակարանները բաց դաշտերն են չընտարտուած կապոյտ աստղազարդ Երկիրով մը: Անմեղ հողիներ որ հեռու կ'ապրին մեր աշխարհին վրայ տեղացող չարիքներէն:

ՎԱՀ. - Իսկ մենք վհուկներս տարիներով ուրիշ բան չտեսանք բայց եթէ հողեպէս տառապող բազմութիւններ, որոնք կուգան մեր բերէն լսելու իրենց բարի կամ

չար բախտի դուշակութիւնը: Թէեւ մենք առատորէն կը վարձատրուինք, բայց մեր վհուկի հողիններն ալ անոնց հետ կը չարչարուին:

ՏԵՍԻԼ Բ.

(Ներս կը մտնէ Մերուսի Արծրունիին, ծաղուած, վառակի լրտեսներէն չնշարուելու համար. դէմքը տխուր է, ձեռքին մէջ բռնած է լապտեր):

ՄԵՐՈՒԺԱՆ. — Ողջո՞յն ձեզ, վհուկներ:

ՎԱՀ. — (մեկուսի եւ պիշ պիշ նայելով Մերուսի երեսին) Եթէ զգեստներուն նայիս՝ սովորական մահկանացու մըն է, բայց դէմքը ազնուականի է: (Կայծակը կը լուսաւորէ Մերուսի դէմքը):

ՄԵՐՈՒԺ. — (շփոթած) Սիրտս տխուր է ինչպէս այս դիւերը. խղճիս մէջ խայթ մը մտեր է, որ զիս կը սպաննէ: Օ՛ն, վհուկներ, բացէ՛ք առջեւ իմ բախտի աստղին զաղտնիքը:

ՏՈՐՔ. — (բռնէ մեկը) Դո՛ւ, Մերուսի, Արծրունեաց տոհմին փառապանծ իշխանը. դու հո՞ս այս քարանձաւին քով, եւ այս խաւարակոռ ժամուն:

ՄԵՐՈՒԺ. — (բոլորովին շփոթած) Լուռ կեցէ՛ք, ոչ ոք իմանայ՝ թէ ես այս փոթորկալից դիւերուան մէջ ձեր քովն եկած եմ. եթէ զաղտնիքը մէջտեղ ելլէ՝ ես ձեր լեզուները կտրել կու տամ, եւ դուք լաւ գիտէ՛ք որ ես իմ սպանակներս կը դործադրեմ: Նայեցէ՛ք, Եղջերք լեռներու ճամբուն վրայ անցորդները ինծի սխալ ուղղութիւն մը ցոյց տուին, եւ դարձայ եւ թիկնապահներու հրամայեցի որ զանոնք չարաչար պատժեն... զղո՛յշ:

ՎՀՈՒԿՆԵՐ. — (միասին կ'աղաչեն) Քարի պէս լուռ պիտի մնանք...:

ՄԵՐՈՒԺ. — (սպառնալից) Եթէ քուները հարցնելու կախարդութեան ուղունքները ուղածիս պէս բախտաւոր չըլլան, վա՛յ է ձեր գլխուն:

ՏՈՐՔ. — (բռնէ մեկը) Արծրունեաց իշխան, ոտքերս կը դողան ներքին

ձայնի մը ազդեցութեան տակ:

ՄԵՐՈՒԺ. — (հանդարտութիւն կեղծելով) Մի՛ վախճար. ըսէ՛ բոլոր ճշմարտութիւնը: Կ'ուզեմ զխնալ՝ բարի թէ չար աստղի տակ ծնած եմ: (Վհուկները կը նետնի բռնէն, յետոյ կը նային դէպի երկինք):

ՎԱՀ. — (բռնէ մէկ ձեռքին մէջ, միւսով գլուխը ծեծելով) Վա՛յ ինձ, իշխան փառապանծ, տեսայ բախտիդ աստղը, որ լուսաւոր ոլորակէն կ'անցնէր դէպի խաւարային ոլորտը:

ՄԵՐՈՒԺ. — (փառաբանութիւն կեղծելով) Եւ սակայն ես կը տեսնեմ արեւ մը՝ որ կը ժպտի հողիւս մէջ: Այդ արեւը արքայից արքային արեւն է, որ Որմիղդի պէս կը լուսաւորէ տիեզերքը:

ԱՆՈՒՇ. — (բռնէ մեկը) Իսկ ես՝ կը տեսնեմ որ յուսահատութեան թանձր քող մը ձգուած է դէմքիդ վրայ:

ՏՈՐՔ. — (փայլ մը դէպի Մերուսի, ապա բռնէ մեկը) Դեմքիդ ծածկէ Մերուսի (Մերուսի պատմութիւնը կը ծածկէ դէմքը). ես կը տեսնեմ քու ձեռքերով սպաննուած հալածու եւ անմեղներու դիակները, որոնք դուրս կ'ելլեն իրենց փոսերէն՝ քեզ անիծելու համար: Այս անէծքն է որ հողիդ արեւը մթաղներ է: Սարսափահար հողիները տրեւու հետ դործ չունին:

ՄԵՐՈՒԺ. — (սպառնալով) Բայց ճիւղ վհուկ, դու ի՞նչպէս կըցար կարգաւ հողիս խռովքը, դու ի՞նչպէս կըցար թափանցել ամէնէն ծածուկ խորքերը իմ հողիս:

ՎԱՀ. — Քու հողիդ, Մերուսի, փակ դիրք մըն է, որ մեր առջեւ բացուեցաւ: Դու կը ցանկաս, Մերուսի, որ մենք վրահուկներս, մեր ներքին ձայնին հակառակ խօսինք: Մենք քու ապագադ աւելի լաւ կը դուշակենք քան դու, որ զայն չես տեսներ: Հողիդ խռոված է եւ սիրտդ մթաղին:

ՄԵՐՈՒԺ. — (վհուկան ձայնով) Լաւ դիտէ՛ք, ազատ վհուկներ, որ ես Հայոց թագին կը ցանկամ: Ո՛չ արցունքներէ

ՏԵՍԻԼ Դ.

կ'ազդուեմ, ոչ նախատինքներէ, ոչ արեան ճապարհներէ: (Արագ փայլելով եւ պոռալով դէպի վհուկները) Կորսուեցէ՛ք երեսէս, ճիւղներ, ապա թէ ոչ՝ սուրս պիտի չողայ (սուրը կը մերկացնէ):

ՏՈՐՔ. — (վհուկան ձայնով) Մենք՝ կը մեկնինք, Արծրունեաց իշխան, բայց ես քեզի կ'ըսեմ որ ես քու գլուխդ տեսայ նիւզակի մը ծայրը անցուած: Այսպէս կորսուեցաւ Դատարէն Բիւրունին, որ իբր մատնիչ իր թագաւորին եւ հայրենիքին, քարկոծուեցաւ խորովին առջեւ: Այսպէս անփառունակ անհետացաւ Փիտակ Սիւնին, որ դաւաճանեց իր թագաւորին, զըրկելով զայն իր աչքերուն զեղեցիկ լոյսէն:

ՄԵՐՈՒԺ. — (սաստիկ գայլացած) Վհուկ, ո՞ր տոհմէն ես դու եւ ի՞նչ է անունդ:

ՏՈՐՔ. — (հպարտութեամբ) Ես Անգեղ տունէն եմ, եւ անունս է Տորք:

ՄԵՐՈՒԺ. — Անունդ զեղեցիկ, դէմքդ զաղրատեալ, սիրտդ որձաքարի պէս կարծր: (Բոլորովին կատաղած՝ սուրը կը փայլէ) Կորսուեցէ՛ք, ճիւղներ:

ՏՈՐՔ. — (վհուկները յամբափայլ բեմի աջ կողմէն դուրս կ'ելլեն) Յիշէ՛, Արծրունեաց տէր, որ ես դաւակն եմ Տորք Նահապետի, որ իր ձեռքերով ժայռերէն որձաքարեր կը փրցնէր, տախտակի պէս կը յղկէր եւ եղունգներով անոնց վրայ արծիւներ կը նկարէր. ես քեզմէ չեմ վախճար...:

ՏԵՍԻԼ Գ.

(Մերուսի առանձին եւ ամբողջ մարմնով դողալով):

ՄԵՐՈՒԺ. — Այս չարաչուր լեզուները սարսուռ մը անցուցին ամբողջ էութեանս մէջքէն. հիմա վայրկեան մը դուրս ելլեմ, զննելու այն հովիւները՝ որոնք տեսայ Եղջերք լեռներու վրայ: Վերադարձիս արդէն հոս պիտի գտնեմ Վահան Մամիկոնեանը (առապարանքով կը մեկնի միւս կողմէն):

(Ներս կը մտնէ վահան, վհուկներու մեկնած կողմէն, ծաղուած է վերաբերով):

ՎԱՀԱՆ. — (շրջելով) Ո՛հ, այդ անիծեալ հովիւներուն սուր աչքերը: Ինչպիսի ուժգնութեամբ սեւեռեցան դէմքիս վրայ: Ուղեցի ծածկուել, բայց իմ չար բախտն ամէնքը զիս կը հետապնդեն: Ո՞ր փախչիմ, ո՞ր ծակը մտնեմ: Ինչո՞ւ համար սիրտս կը տրոփէ. ինչո՞ւ ոտքերս կը դողան (կանգ կ'առնէ): Արդեօք Մերուսի մոռցա՞ւ որ այս ժամուն հոս պիտի գրտնուէր: Այս ամայի եւ խորհրդաւոր վայրին մէջ ժամադրուած էինք: (Հովուական սրինգի ձայն) Ուրախութիւն չունիմ... խիղճս զիս կը հալածէ... Մամիկոնեաններու անձնուէր եւ հայրենասէր ուղիէն չեղած մըն եմ...:

ՄԵՐՈՒԺ. — (ներս կը մտնէ մտածկոտ եւ տոգոյն) Վահան, ներքէ ինծի, անակնկալ դիպուած մը ստիպեց զիս քիչ մը հեռանալ:

ՎԱՀԱՆ. — (նայելով պիշ պիշ անոր երեսին) Մերուսի, ինչո՞ւ այդքան դաւկահար ես, խօսեցուցի՞ր արդեօք վհուկները:

ՄԵՐՈՒԺ. — (ձեռքը նակտին դրած, մըտածկոտ) Լուսուցի դանոնք, եւ արտաքսեցի:

ՎԱՀԱՆ. — Ափսոս, եթէ հոս ըլլայի՝ ես ալ բախտիս աստղը դուշակել պիտի տայի: Անստույգ ու տխուր ժամանակներու մէջ կ'ապրինք:

ՄԵՐՈՒԺ. — Կ'ամէնամ քեր կը մտածեմ թէ մենք Հայաստանի մեծագոյն նախաբնորներս ստիպուած ենք այս ամայի թաքստոցներուն մէջ ապրելու, փոխանակ մեր փարթամ ամարանոցներուն մէջ:

ՎԱՀԱՆ. — (դառնացած) Ի՞նչպէս կ'ուզես որ մենք մեր ամարանոցներուն մէջ ապրինք: Մենք անոնցմէ արտաքսուած ենք: Մեր կիներն ու զաւակները մեզմէ այնպէս կը փախչին՝ ինչպէս լոյսը խա-

ւարէն: Դու, Մերութան, իմ քեռորդիս ես, քոյրս ի՞նչ երեսով կը նայի քեզի:

ՄԵՐԺ. - (գունատաժ) Մի՛ հարցնէր, Վահան, երբ օր մը Արշակի եւ Վասակի բանակներէն հալածական զաղտազողի մտայ հայրենիք, կիսն զիս տեսնելուն աշխարհի աղաղակ մը փրցուց որ զարհուրեցուց զիս: «Դաւաճան», «մատնիչ», «հաւատուրաց» կոչեց զիս, «ազդը ու կրօնքը թող անէծքներ թափեն զլիսուդ»: Այդ օրուէն սկսած ես թափառական կը շրջիմ հայրենի հողին վրայ...: Թող ըլլայ ինչ որ ըլլայ, բաւական է որ Արծրունի մը կրէ Հայոց թաղը քան Արշակունի մը:

ՎԱՀԱՆ. - Այդպէս մի՛ խօսիր, Մերութան, որչափ ատեն ապրի Վասակ Մամիկոնեան՝ Արշակի թաղը պիտի մնայ անսասան:

ՀՈՎԻԻՆԵՐԸ. - (կը վերսկսի իրենց գիշերային երգը, սրինգի ընկերակցութեամբ):

ԵՐԳ

«Իջիր գրհնութիւն երկնից բարձունքէն
Հայ բանակներու վրայ անպարտելի.
Հայ ռազմիկներ, սփռեցէք վարդեր
Քաջին Արշակայ, մեծին Վասակայ»:

ՄԵՐԺ. - Վա՛յ թշուառութեանս, այս անդամները նորէն իրենց գիշերային երգով ախանջա ծակեցին:

ՎԱՀԱՆ. - Մենք ալ կարող էինք մէկ մէկ գիւցաղներ ըլլալ, եւ եղանք հայրենիքին դաւաճաններ, եւ ինչ որ աւելի սոսկայի է՝ իմ չար նախանձը Վասակ եղբորս դէմ, որ որդի մը պէս սիրտս կը կրծէ: Փառամոլութենէ մղուած ատելութիւնս Արշակի դէմ հասաւ իր վերջին կատաղութեան, երբ մեծ եղբորս Վարդանի գլխատումէն մերջ թաղաւորը Վասակը կարգեց սպարապետ, զոր իր աչքի լոյսին պէս ալ կը սիրէ: Վերադարձած ամբարտաւանութիւնը ներքէ չի գիտեր:

ՄԵՐԺ. - Վահան, ժողովուրդներու յիշողութիւնը կարճ է: Գիտցիր որ երբ արքայից արքան գլխու վրայ կապէ Արշա-

կունիներուն թաղը, քեզ պիտի դնեմ հայ բանակներուն սպարապետ եւ Մամիկոնեաններու Նահապետ:

ՎԱՀԱՆ. - Շնորհակալ եմ, Մերութան, զիտեմ որ դու զիս կը սիրես:

ՄԵՐԺ. - Բայց անհրաժեշտ պայման մը կայ:

ՎԱՀԱՆ. - Եւ ի՞նչ է այդ պայմանը:

ՄԵՐԺ. - Դու պէտք է ընես՝ ինչ որ ես ըրի: Պէտք է փութով երթաս Տիգրոն, կանգնիս արքայից արքային առջեւ, երդումով ուխտես որ յաւիտեան իրեն հաւատարիմ պիտի մնաս, պիտի ուրանաս քրիստոնէական հաւատքը, պիտի դառնաս մաղղէական, երկրպագելով արեւի եւ կըրակի. պիտի խոստովանիս թէ պարսից արքային պաշտած աստուածն է ճշմարիտ աստուածը:

ՎԱՀԱՆ. - (ցնցուելով) Դժուար պայման: Ի՞նչպէս պիտի կարենամ դաւաճանել հայերու դարաւոր, աւանդութեան: Նախնիքներս միշտ սուրով պաշտպանեցին քրիստոնէութիւնը, ես պիտի վարենամ ուրանալ դայն:

ՄԵՐԺ. - (հեգնական ժպիտով մը) Դուք Մամիկոնեաններդ՝ Չինաստանի կայսերական սերունդէ էք. ի՞նչ կապ ունիք անոնց հետ:

ՎԱՀԱՆ. - (գայրացած) Դէ՛հ, Մերութան, մտքէդ հանէ այդ պառաւական առասպելը. մենք Մամիկոնեաններս՝ հարազատ հայկական ծագումն ունինք. Մամիկոնեաններու չափ ոչ մէկ նախարարական ցեղ սիրած է Հայրենիքը. այդքան սէր հեռաւոր Չինաստանէն չէր կրնար դալ:

ՄԵՐԺ. - (մեկուսի) Փորձեմ կնոջ մը ձեռքով հրապուրել յամառ Մամիկոնեանը: (Կը մօտեցայ Վահանին, շոյելով ուսերը) Լաւ ուշ գիր Վահան: Օր մը Շապուհ արքան իմ եւ պարսիկ մեծամեծներուն առջեւ ըսաւ. Մերութան, եթէ յաջողիս Վահանը ոտքերուս բերել, կ'երդնում յարեն, ի ջուրն եւ ի կրակն, որ իմ չքնաղ քոյրս՝ Որմիզուխտը անոր կնութեան կու տամ: Գիտես թէ ի՞նչ ըսել

է արքայից արքային փեսայ ըլլալ:

ՎԱՀԱՆ. - (ցոլք մը աչքին մէջ) Իբրեւ Մամիկոնեան՝ Հայոց թաղին չեմ տենչար. բայց տենչալով կը տենչամ որ իմ զոհակիս մէջ բաղմի բամբիշ մը արքայական թաղով պսակուած:

ՄԵՐԺ. - (ծպտադէմ) Ուրեմն որոշեցի՞ր:

ՎԱՀԱՆ. - Այո՛:

ՄԵՐԺ. - Ի՞նչ:

ՎԱՀԱՆ. - Երթալ Տիգրոն, փարիլ արքայից արքային ծոնկերուն, խոստանալ անոր ծառայութիւն, ուրանալ հաւատքս, ըլլալ առաջնորդ քեզի պէս Սասանեան բանակներու, եւ Որմիզուխտը հետս առած դառնալ Տարօն, եւ հոն կանգնել ատրուչան մը, եւ Սամուէլ որդիս դաստիարակել մաղղէական:

ՄԵՐԺ. - (կը գրկէ ու կը համբուրէ Վահանը) Վահան, դու հիմա աչքիս լոյսն ես, վարդի գեղեցիկ կոկոն մը, Հայաստանի ծաղիկ մը, մենք այլեւս իրարու կապուած ենք անքակտելի կապերով:

ՎԱՀԱՆ. - Այո՛, անքակտելի կապերով... կեանքով ու մահով...:

ՄԵՐԺ. - Աճապարէ Վահան, Եղջերք լեռներու ճանապարհը լրտեսներով լեցուն է, հեծիր նժոյգիդ վրայ, սլացիր դէպի Տիգրոն, եւ գործադրէ ինչպէս որ կարգադրած ենք, լուսաշող Որմիզուհ հետդ ըլլայ:

ՎԱՀԱՆ. - (յոգնած եւ դալկահար դէմքով, ձեռքը փակտիմ) Երկինք, դու վկայ եղիր... այս առաջին անգամն է որ Մամիկոնեան մը դաւաճանութեան եւ հաւատուրացութեան ոճիրը կը գործէ (կը շրջի բեմին վրայ): Արաքսի ջուրերն անդամ բաւարար պիտի չըլլան ճակտիս սեւ բիծը սրբելու: Մնաս բարով Մերութան:

ՏԵՍԻԼ Ե.

ՄԵՐԺ. - (առանձին) Աղամանդը աղամանդով կը փչուրի: (Կը շրջի բեմին վրայ, դիւային ժպիտով) Վերջապէս պարսիկ իշխանուհի մը բաւական ձգտութեամբ քննարկեալ արքայից արքային պատուան-

դանին առջեւ: Այսպէս լուծեցի վրէժս, խախտեցի հայ ժողովուրդի համոզումը Մամիկոնեաններու հաւատարմութեան վրայ: Սիրտ առ Մերութան, հակառակ վհուկներու չարագուշակութեան, բախտի աստղը միշտ հետդ է... (յանկարծակի մը շուշ դաշտի խորէն, կը լսուի մահաապստոն աղաղակը) Մերութան... Վահան... Մերութան... Վահան...: (Սարսափահար) Չարագուշակ վհուկներու աղաղակն է, եւ ասիկա այն պահուն՝ երբ Վահանը Եղջերք լեռներու գոտիէն անցած է: Եթէ Վահանը ձերբակալուած է, կորսուած եմ ես ալ: Պէտք եմ ապահով ըլլալ: (Խելա-յեղօրէն դուրս կ'ելլէ):

ՏԵՍԻԼ Զ.

ՍԻՍԱԿ. - (հակառակ կողմէն ներս կը մտնէ Մերութանի գաղտնի լրտեսը, գեղջուկի հագուստով, գլխուն վրայ ապարօշ, սպիտակ մօրուֆ, գաւազանին յեցած) Ո՛ւր է իմ փախստական տէրս: Ինծի պատուիրէր էր որ այս գիշերին այս քաղաքումս մօտ դռնուիմ. արդեօք ձերբակալուեցա՞ւ Եղջերք լեռներու լըրտեսներէն: Հայրենիքիս վիշտերը իմ սիրտս ալ կը ճմլեն: Բարեկամներն անգամ կ'ըսեն թէ Մերութան կասկածոտ եւ անզուրկ մարդ է...: Ո՛րչափ որբեր եւ այրի կիներ կ'անիծեն զինքը: (Ուժով ոտնաձայն մը) Ո՛վ է արդեօք:

ՏԵՍԻԼ Է.

(Ներս կը մտնէ Մերութան)

ՄԵՐԺ. - (առանց նշմարելու Սիսակը) Վահանը չըջապատէն անցած է, փրկուած եմ (կը տեսնէ Սիսակը): Սիսակ, կեցցես... Ժամանակին հասեր ես, հազիւ քեզ ճանչցայ: Էյ, ի՞նչ նոր լուր ունիս:

ՍԻՍԱԿ. - (գաւազանը մէկ կողմը դնելով, մէջքը շտկած եւ խոնարհութիւն մը ընելով) Ողջոյն իմ ամենազօր տիրոջը: (Պահ մը կեցալէ վերջ) Բերանս առաջ չ'երթար գէշ լուրերու կծիկը քակելու:

ՄԵՐԺ. - Կը հրամայեմ, խօսէ. առանց վախճալու ըսէ բոլոր ճշմարտութիւնը:

ՍԻՍ. - (միջոց կապաժանումով) Տէր իմ, Արտաշատի վճռակները հազար դարհուրների նախանշաններ, հազար սոսկալի նախագուշակութիւններ տարածեւ են ամէն կողմ:

ՄԵՐԺ. - (ջանալով ինքզինքը գտել) Որո՞նք են այդ նշանները:

ՍԻՍ. - Անոնք կը պատմեն թէ Հայաստանի դանաղան տեղեր երկրաշարժներ են: Ղեր են եւ գետերի տակէն տարօրինակ ձայներ լսուել են. փայլակներ տեսնուել են: որ շողալով երկինքէն վար տեղացեւ են:

ՄԵՐԺ. - Ա՞յսչափ միայն:

ՍԻՍ. - Տէր իմ, դեռ աւելի սոսկալին կայ. անոնք կ'ըսեն թէ Հայաստանի երկրներին վրայ տեսել են անծանօթ աստղեր, տեսել են կարմիր ձիւն...:

ՄԵՐԺ. - Ժողովուրդը կը հաւատա՞յ այդ տարօրինակ նշաններուն:

ՍԻՍ. - Այո՛, տէր իմ, կ'ընդունի դանոնք, իբրեւ Աստուծոյ անթափանցելի կամքին նշանները:

ՄԵՐԺ. - Ժողովուրդի մտքին մէջ ո՞վ է չարիքներու պատասխանատուն:

ՍԻՍ. - (կ'մկմալով) Տէր իմ, լեզուս առաջ չ'երթար ըսելու: (Պահ մը կը կեցնայ) Մերութան Արծրունին է, կ'ըսեն... չարագործ Մերութանը:

ՄԵՐԺ. - Ուրիշ լուր ունի՞ս:

ՍԻՍ. - Արծրունեաց... տէր...

ՄԵՐԺ. - Շուտ խօսէ, ինչո՞ւ լեզուդ բռնուցաւ:

ՍԻՍ. - Արշակ թագաւորը Հայաստանի ամէն կողմը խնդրակներ արձակել է հայրենիքի դաւաճանները ձերբակալելու եւ արքունի ատեանին յանձնելու համար. իսկ ձեր գլուխը, տէր իմ, քսան տաղանդ ունի զբոսած... իշխանուհի մայրդ կը պաղատի որ անմիջապէս մեկնիս հայկական հողէն:

ՄԵՐԺ. - (խռովքը գտելով) Փութա, Սիւսակ, գնա լուր տարածէ թէ Մերութան Արծրունին ձերբակալուած է: Պէտք է մտքերը շփոթութեան մատնուին, մինչեւ որ ես ժամանակ ունենամ Ատրպատական հասնելու, ուր պարտական բանակ մը

կազմ ու պատրաստ կեցած է, իմ առաջնորդութեամբս Հայաստանի վրայ յարձակելու:

ՍԻՍ. - (ցուպը վերցնելով) Տէր իմ, ձեր հրամանը գլխուս վրայ: (Մեկնելու վրայ):

ՄԵՐԺ. - (գայն կը կեցնէ) Զոյշ, եթէ սուտդ բռնուի՝ կ'ըսես որ այդ սուտ լուրը լսել ես քանի մը բամբասա՞նք կ'ըսէրէ: Ապա թէ ոչ՝ գլուխդ վրայ կու տաս:

ՍԻՍ. - Ձեր հրամաններն ու խորհուրդները, տէր իմ, բառ առ բառ պիտի դործադրեմ: (Խոնարհութեամբ կը մեկնի):

ՏԵՍԻԼ Ը.

ՄԵՐԺ. - (առանձին) Եթէ ես ինքս մոդ չըլլայի՝ Արտաշատի վճռակներուն նախագուշակութիւնները ցնդաբանութիւն պիտի համարէի: (Ուժգնութեամբ) Արշակունեաց թագը գլխուս կապելու համար ոչ մէկ արգելքի առջեւ կանգ պիտի առնեմ: Թող Հայոց աշխարհը քարուքանդ ըլլայ, ի՞նչ փոյթ, թող այդ աւերակներուն վրայ բուերը թափին... բառ է որ ես արքունական թագով պսակուած ըլլամ: (Բռնուցքը օդին մէջ բարձրացուցած) Թող դժոխքի անդունդին մէջ գլորին երեք չարագուշակ վճռակները: (Կը մեկնի արագութեամբ):

ՏԵՍԻԼ Թ.

(Երեք վիտակները)

ՎԱՀԱԳՆ. - (միւս կողմէն ներս կը մտնէ) ... Անիծեալ յաւիտեան...:


ԱՆՈՒՇ. - (միւսին ետեւէն ներս մտնելով) Անիծեալ յաւիտեան...:

ՏՈՐՔ. - (երրորդին ետեւէն ներս մտնելով) Անիծեալ յաւիտեան...:

ՄԵՐՈՒՆԻ ՀՈՎԻԻ ՄԸ. - (Տորքի ետեւէն ներս մտնելով, ցնցոտի հագուած, ձեռքին մէջ սրիկը, կը պռույգ գրեթէ) Անիծեալ յաւիտեան...:

Մինչդեռ բոլոր տեսարանը կը մթնայ, որոտում մը կը պայթի... եւ վարագոյրը կ'իջնէ:

Վ Ե Ր Ջ Ա. ա ր ա ր ի ն



13

Ժամանակէ մը ի վեր այս սիւնակը փակուած էր. ոչ թէ՝ որովհետեւ շատ բունն յարձակումի ենթարկուած էինք, այլ որովհետեւ նշմարեցինք կիրք եւ տըղայամիտ հակառակութեան ոգի մեզի հանդէպ. լաւագոյն նկատեցինք ժամանակ մը ուսումնասիրել կացութիւնը, որ դժբախտաբար շատ փոխուած է: Այո՛, ունինք կարգ մը թերթեր որոնք ջատագով կ'ուզեն կանգնել մեր լեզուին, սակայն առանց խոր պատճառաբանութեան: Կան ալ որ քմահաճոյքի առարկայ դարձուցած են մեր ուղղադրութիւնը, միեւնոյն բանը երբեմն այս ձեւով եւ երբեմն ուրիշ ձեւով գրելով. օրինակ տա՞նք. նոյն խմբագիրը երբեմն բունն պաշտպան անոյշ բառը ոյ-ով գրելու, յանկարծ օր մը կը սկսի ու-ով գրել, ըսելով թէ նախորդը ա՛լ հինցած ձեւ է. բայց ասոր փոխարէն ալ կը սկսի քննուշ բառը, որ մինչեւ այսօր ու-ով կը գրուէր, գրել ոյ-ով, որովհետեւ իր ակամքին աւելի անոյշ, աւելի քաղցր կը հնչէ եղեր քննուշ-ը, ինչ որ յայտնի սխալ է եւ արդէն գրած ալ ձեռք այս մասին: Ձեռք ուղեր անուններ տալ, չվիրաւորելու համար հրապարակաւ կարգ մը ակամքներ: Աստուծոյ նկատելու են որ մեր այս սիւնակները նպատակ չունին - ինչ որ սկիզբէն իսկ յայտարարած ենք - քերականական կամ ստուգաբանական մանրակրկիտ նրբերանգներով զբաղելու, կամ ակադեմական վէճեր կատարելու. աստուծոյ համար ունինք մեր թերթին բուն լեզուաբանական բաժինը. այս սիւնակները գլխաւորաբար կը մաքառին լեզուական այն խեղաթիւրումներուն դէմ, որ մեր լրագրական ասպարէզին մէջ սարդի ոտտայնի նման ծաւալած են եւ զբաւած շատ մը թերթերու անկիւններ, երբեմն նոյնիսկ մուտքի դուռը եւ ճակատը:

ՇՈՒՆԵՐՈՒ ԲՈՂՈՔԸ

Կ'ապրինք դարու մը մէջ ուր ամէն օր նորանոր փորձեր կը կատարուին լուսին հասնելու. արդէն արուեստական արբանակներ երկրիս շուրջ կը դառնան: Սփութնիք Բ.ին մէջ շուն մը սրարշաւ կ'ընթանայ, վերէն գիտելով մեր մոլորակը: Բայց ահա երկրիս բոլոր շուները իրար անցած են. ցոյց մը կազմակերպուած է. Նիւ Եորքի մէջ, ՄԱԿի չէնքին առջեւ վեց շուներ կը յայտնուին, որոնց վիզերէն կախուած էին տախտակներ հետեւեալ արձանագրութեամբ.

Մեզի դէմ բարի եղէք, մեմ մարդոց լաւագոյն բարեկամներն ենք, ըստ այնմ մեզ հետ վարուեցէք: («Այդ», 1957, Նոյեմբեր 5):

Ձեմ գիտեք թէ ի՞նչ պիտի ըսէ Ս. Մեարոպ, եթէ առ ալ սփութնիքի մը մէջ նշատած՝ վար դայ երկնքէն. պիտի գլխայ անշուշտ շուներուն, որոնց վիզէն կախուած իրենք չեն գրած անշուշտ. բայց հայերէն այդ թարգմանութիւնը՝ այդ շուներուն վիզէն անգամ կախուելու բան մը չէ. քերականական երկու խոշոր սխալ, երկու տողի մէջ...:

Հայերէնի մէջ չ'ըսուիր մեզի դէմ բարի եղէք, այլ կ'ըսուի մեզի հանդէպ բարի եղէք. դէմ-ը հակառակութեան պարագային կը գործածուի. եւ կ'ըսուի մեզի դէմ հակառակութիւն ունիք, մեզի դէմ քշեմ-մուքիւն կը խորհիք: Եթէ բարի է՝ դէմ չի կրնար ըլլալ: Բարեացակամ վերաբերումի համար՝ չ'ըսուիր դէմ, այլ հանդէպ. մեզի հանդէպ գուր ունեցէք, մեզի հանդէպ բարեացակամ եղէք եւ այլն:

Հիմա դուք ըսէք թէ ինչ վերաբերում պէտք է ունենանք մեր խմբագրին հանդէպ:

Երկրորդ սխալ մըն ալ՝ վերջին նախադասութեան մէջ. մեզ հետ վարուեցէք: (Արդէն եղած չեղածը չորս տող է): Ճիշտ է այս խօսքը՝ արեւելահայերէնի մէջ, բայց արեւմտահայերէնի մէջ կ'ըսուի ՄԵՁԻ հետ վարուեցէք: